ԵԴ2/8777/02/23

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

23.06.2023թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Շիլաջյանը (այսուհետ՝ Դատարան), քննարկելով «ՍՈՒՍՄԵՏ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Աշոտ Աթաբեկյանի կողմից ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույց պահանջելու հարցերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

«ՍՈՒՍՄԵՏ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Աշոտ Աթաբեկյանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ Դատական դեպարտամենտի՝ ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 2023թ. մայիսի 02-ի թիվ 5 որոշումը մասնակի՝ միայն « ՍՈՒՍՄԵՏ» ՍՊ ընկերության մասով, անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը դատարանի գրասենյակ է մուտքագրվել 13.06.2023թ., իսկ դատավոր Ա. Շիլաջյանի աշխատակազմին է հանձնվել 14.06.2023թ.:

Դատավորի աշխատակազմը հաղորդակցության միջոցով 19.06.2023 թվականին տեղեկացրել է հայցվորին հայցադիմումում առկա թերության, մասնավորապես՝ « ՍՈՒՍՄԵՏ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Աշոտ Աթաբեկյանի կողմից ներկայացված հայցադիմումում որպես ներկայացուցչի էլեկտրոնային հասցե նշվել է *ashot-atabekyan@mail.ru, որպես պատասխանող Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ Դատական դեպարտամենտի նշված՝ օրենքով սահմանված էլեկտրոնային հասցե նշվել է նույն՝ ashot-atabekyan@mail.ru էլեկտրոնային հասցեն,* այսինքն՝ հայցվորի կողմից չի ներկայացվել պատասխանողի էլեկտրոնային փոստի հասցեի բացակայության մասին՝ առաջարկելով եռօրյա ժամկետում վերացնել այն:

22.06.2023 թվականին հայցվորը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 1.2-րդ կետով սահմանված կարգով վերացրել է նույն հոդվածի 1.1-ին մասում նշված հայցադիմումում առկա ձևական թերությունը (հիմք՝ «ՍՈՒՍՄԵՏ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Աշոտ Աթաբեկյանի կողմից ներկայացված թիվ Մ-17305/23 դիմումը):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը [illegible] այն՝ ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

2. Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ Դատական դեպարտամենտից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ սույն որոշման 2-րդ կետի պահանջները պատասխանողի կողմից ենթակա է կատարման սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. ՀՀ քաղաքաշինության կոմիտեն իրավունք ունի հայցադիմումի պատասխան ներկայացնել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ՇԻԼԱՋՅԱՆ**